

մանակակից պատմութեան համար անդնահատելի շատ անշեկուծիւններ:

Ս. Էջմիածնի միարանութիւնը յանձին Բագրատ վարդապետի կորցրեց մի ճշմարիտ եկեղեցականի մի կարեւոր ոյժ:

Հանդիստակերայր, բազմաշարշար ոսկորներէիդ. քո անունը գեռ երկար կ'իշուի քեզ սիրող և յարգող շրջաններում:



Ս. ԵՂԻՆՅԻ ՎԱՆՔԸ ԲՈՒԶՈՎՆՈՒՄ.

Բագուից գէպի արեւելք, մօտ 30 վերստաչափ հեռաւորութեան վրայ, Ափշերօնեան թերակղզու ավին տարածուում է Բուզովնա գիւղը:

Թէ ի՞նչ է նշանակում Բուզովնա բառը՝ դժուարանում ենք բացատրել, չընկնով ոչ Պարսից բառարանում և ոչ մի ուրիշ տեղ այդ բառի ճշգրիտ բացատրութիւնը. հաւանաւանորէն նա բազկացած է երկու բառից՝ բուզ—սառուց և օվգան—ջրհոր, սառը ջրհորներ ունեցող տեղ, որովհետեւ Բուզովնի ջրհորները յայտնի են ամբողջ շրջակայքում՝ իրենց սառնութեամբ ու լաւ յատկութեամբ:

Գիւղի բնակիչները թաթեր են և խօսում են թաթերէն, իսկ եթէ հաւատալու լինինք մի աւանդութեան, որ գիւղի անունը եղել է Մաղրասայ կճշտուի այն ենթադրութիւնը, թէ Նամախու դաւառի Մաղրասա գիւղացիք այստեղից են գալթել գէպի հիւսիս:

Թէ ովքեր են եղել գիւղի նախնական բնակիչները՝ յայտնի չէ. նոյն իսկ Բագուայ նահանգի պատմիչ Եսայի կաթողիկոսը, որն այնքան յաճախ յիշում է Մաշտաղա և Շուալան՝ Բագուայ խաների ամառանոցները, և նոցա շրջակայքում յաճախակի կրկնուող պատերազմները, միանգամայն չուում է Բուզովնի մասին, որը վերջիններիցս միմիայն երեք—չորս վերստ հեռաւորութիւն ունի:

Իսկ եթէ ի նկատի ունենանք տեղական հին յիշատակարանները և արձանագրութիւնները, պէտք է ենթադրել, որ Բուզովլան եղել է մի հին հայաշատ կենտրոն, որն ունեցել է իւր սեփական սրբատեղիները, իր քահանաները և իր առանձին գերեզմանատունը:

Ինչպէս գիւղի նախնական սահմաններն են ցոյց տալիս, նա եղել է բաւական մեծ, սակայն յաճախակի կրկնուող արշաւանքների և պատերազմների շնորհիւ բնակիչները գաղթել են. ներկայումս մնացել է 400 տուն բնակիչ՝ բոլորն էլ թուրք:

Բուզովլան, որ մի օվազիս կարելի է համարել ամբողջ Կասպից ծովեզրեայ անապատումի իր առողջարար ու թեթև օդով, իր յստակ ու պազ ջրերով, իր փարթամ բուսականութեամբ՝ վաղուց արդեն Շամախույ և Բագուայ խաների ուշադրութիւնն էր դարձրել իր վրայ: Շնորհիւ երկրի բնական բարիքների բնակիչները պարապում են այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ. Բուզովլան յայտնի է իր բազմատեսակ խաղողներով՝ քիչմիշի, քէչամջագի, սարիգիշայ, ևլն ևլն ...: Համարեա ամեն մի գիւղացի ունի իր տան առաջ սեպհական այգի, որով գլխաւորապէս հոգում է իր տան կարիքները: Գովուած են նաև Բուզովլի սելսն ու ձմերուկը:

Բուզովլան, որ մի ժամանակ հայի գիւղ է եղել, ներկայումս ծառայում է Բագուեցւոց համար իբրև ամառանոց, որոնք չեն խնայել ոչ մի միջոց զարդարելու իրենց սեպհական պարտէզները նոյն իսկ արտասահմանեան ծառերով ու ծաղիկներով:

Հայ ընտանիքները, որոնք սեպհական այգիներ և տներ ունին, թուով 20 են:

Բուզովլան, բացի ամառանոց լինելուց, խեղճ Բագուեցւոց համար ծառայում է նաև իբրև սրբատեղի, ուր քաղաքից և մօտակայ շրջակայքից հաւաքուում են բազմաթիւ ուխտաւորներ:

Ս. յատեղ գտնուում են մի քանի սրբատեղիների, որոնց մէջ աչքի է ընկնում իր մեծութեամբ ու գեղեցկութեամբ

Ս. Եղիայի մատուռը՝ որի հետ կապուած է նաև Անդրէա և Անանիա քարոզիչների անունը:

Թէ ովքեր են սորա՝ ոչինչ յայտնի չէ. միայն ըստ աւանդութեան դորա քարոզիչներ—վարդապետներ են եղել, որոնք գործել ու նահատակուել են այստեղ:

Մատուռը կանգնեցրած է վերջին ժամանակներս, ինչպէս այդ ցոյց է տալիս դռան գլխի արձանագրութիւնը. «Կառուցաւ մատուռս սրբոյն Եղիայի և Անդրէի արդևամբ և ծախիւք աստիճանաւոր Աւոն Կասպարեան Եաղուբեանց ի 30-ն սեպ. 1862 թ.»: Երրորդ նահատակի, Անանիայի, անունը գուցէ նորա համար չէ յիշուած այստեղ, որ Անանիայի գերեզմանաքարը կտորած և կորած էր մի առ ժամանակ. երևի կառուցանելու ժամանակ չեն գտել և այնպէս անուշաղիբ են թողել:

Մատուռի ներսը, ուր սեղանն է, բարձրանում են երեք մեծ խաչքարեր, որոնց վրայ չկայ ոչ մի յիշատակութիւն ու թուական. միայն փորագրուած է մէջտեղը խաչ և զարդարուած խաղողի ողիոյզի ու տերեւների քանդակներով: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երեք խաչքարերն հանած են մի մեծ տապառած քարից, որի վրայ է այժմ կանգնեցրած սեղանը և որի արևելեան կողմը կաղմել է մի ժամանակ քարանձաւ. իսկ այդտեղ ըստ աւանդութեան ճըզնել են յիշեալ քարոզիչ—վարդապետները:

Մինչև 1862 թ., այսինքն մինչև մատուռի կանգնեցնելը, այդ խաչքարերը բաց են եղել և շրջապատուած փոքրիկ քարերի պատնէշով, ուր կատարուել է նաև պաշտամունք:

Աւանդութիւնը պատմում է, որ մի թուրք կտորելով ամենածայրի խաչքարը, կամենում է տանել իւր նոր շինած տան դռան համար. բայց չհեռացած 10 քայլ, սայլի անիւը կտորուում է, ձին սատկում՝ թուրքը սարսափահար փախչում ու պատմում է իր համազիւղացիներին, և այդ օրուանից մատուռը հաւասար պաշտաման առարկայ է դառնում՝ ինչպէս հայերի, նոյնպէս և տեղացի թրքերի համար, և համարեա ամեն օր լինում են ուխտաւորներ:

Բազուեցիք, որոնց միակ ուխտատեղին է սա, ահագին

բաղձութեամբ Վարդապետին և ս. Աստուածածնի ասնին
 դիմում են Բուզովնայ իրենց սրախ մուրազը ստանալու
 Ս. Եղիայից: Բայց որովհետև մինչև 30 թ. ուխտաւորները
 մնում էին օրերով բացօդեայ, սենեակ չունենալու պատճա-
 րաւ, 1830 թ. բազուարնակ Սահակ Աղամեանցը մատան
 արեւմտեան կողմում շինել է սուել էրեք քարաշէն սենեակ-
 ներ, ուր մնում են ուխտաւորները:

Աստուծի սեղանի արեւմտեան կողմից մի անցք տանում
 է դէպի նահատակների գերեզմանը, որտեղից վերցնում են
 հող: Այդ անցքի ձախ կողմում, սեղանի վրայ, ամրացրած
 է մի քար, որի երկ. մօտ 2 ֆուտ է, իսկ լայն. 1 1/2 ֆ. պար-
 ունակում է հեռեկալ արձանագրութիւնը. «Ես Ներսէս
 սւազ քահանայ շինեցի ջրհորս այս յիշատակին ծնողաց
 իմոց հայր քահանայ Տէր Ներսէս և կնոջ
 նորա խոթունս ի ամի թուականին Հայոց Պհ.՝
 (փրկ. 1421 թ.): Գիւղի հիւսիսային մասում գտնուում է
 սպիտակ քարից շինած ջրհոր, որտեղից մինչև այժմս էլ օգ-
 տուում են թրքերը, և կրում է Քէշիշ օվղանի—Տէրաէրի
 ջրհոր անունը. իսկ նորան կպած է Քէշիշլար—Տէրաէրի
 այգին, ուր մնացել են կայր և մի քանի գինու հնձաններ:

Աւելի հետաքրքրական է հեռեկալ երեոյթը. բուզովնե-
 ցի Հէյրաթ—օղլի թուրքը, որ մօտ 112 տարեկան մի ծերուկ
 է, պատմում է իր պապի մի պատմուածք, որը մեռել է
 115 տարեկան հասակում, ուրեմն և կարող էր պատմել
 ժկ. դարի դէպքեր: Վաճառականութեամբ սա գնում է
 Աստրախան և քաղաքում ծանօթ չունենալու պատճառաւ
 իջեանում է մի պանդոկում, ուր իւր համադիւզացու հետ
 թաթերէն էր խօսում: Պանդոկի տէրը, որ մի պարթև կազ-
 մուածքով ու գեղեցիկ դժագրութեամբ հայ էր, կանչում, լաւ
 հիւրասիրում է սոցա՝ տեղեկանալով որ սոքա բուզովնացի են:
 Յետոյ իրանք թրքերը, երբ հարցնում են հիւրասիրութեան
 պատճառը, հայը պատմում է, թէ ինքն ևս բուզովնացի է, թէ
 իւր պապը գաղթել է 1500 թ., թէ պապի անունը եղել է
 Նազարէթ, որն այդ դիւզում ունեցել է ահադին կալուածք-
 ներ ու հարստութիւն, թէ գիւղի արեւելեան—հարաւային

փողոցներից մէկը նորա անունով կոչուում է Նազարէթի փողոց, թէ նորա ազգականներից եղել է մի Ներսէս քահանայ որն ունեցել է Ջրհորներ և որի դռան աջ ու ձախ կողմերում սաթլով թաղած են զբաններ, թէ նորա այգու մէջ թաղած է երկու մեծ կարասով զինի, իսկ փախտախ ժամանակ բոլոր պղնձնեղէն անօթները ծածկել են Բուզովնա գնացող ճանապարհի վրայ գտնուած «Նարդար» այգում, և լին:

Թրքերը պատմում են, որ վերադառնալուց յետոյ գտել են բոլոր ասածները, բացի պղնձէ անօթներից. զինու կարասները մինչև այդ ժամանակ կային, միայն միջի զինին կուպր էր գառել: Այժմ այդ կարասներից մէկը գտնուում է ս. Մ. Մելիքեանցի այգում. իսկ Նազարէթ անունով փողոցը մինչև օրս էլ պահել է իւր անունը, որ այժմ աղաւաղուած կոչուում է «Նազրանլի»:

Ինչպէս զիւղի հին բնակիչներն են պատմում, ս. Եղիայի մատուռում կար ձեռագիր յիշատակարան, այժմ անյայտ ուր եղել է այդ սրբատեղիների մանրամասն տարեգիրն և, որ գլխաւորն է՝ մատուապատկան կալուածքների քանակը: Դրժքադգարար մինչև այժմ որչափ աշխատեցի, չկարողացայ դրանել որևէ այդպիսի արձանագրութիւն, ոչ առանձին մարդկանց մօտ և ոչ էլ քաղաքի եկեղեցիների յիշատակարանների մէջ:

Հրաշալի դիրք ու գեղեցիութիւն ունի Ս. Եղիայի մատուռը. չորս կողմից շրջապատուած է սպիտակ քարէ սալաշատակով և փայտէ վանդակներով. իսկ սոցա ետեւը թիկնապահների նման կանգնած են սաղարթախիտ հովհար ծառեր, որոնց հովանու տակ քիչ չեն հանգիստ վայելել արևից պապակուած Բագուեցիները: Մատուան արևելեան սալաշատակից բացուում է հիանալի տեսարան. դիմացդ աչքդ կտրածի չափ տարածուում են կանաչազարդ այգիներ, որոնց ընդգրկում է անձայր կապուտակ ծովը: Աջ կողմը տարածուում են Մարդաքան, Նուալան մօտակայ գիւղերը, որոնք նոյնքան փարթամ են բուսականութեամբ, որքան և Բուզովնան. և եթէ դորա վրայ աւելացնելու լինինք գիւղից երկու վերստաչափ դէպի հիւսիս գտնուած ապառաժներէ

միջից վիժող սառը կենդանացուցիչ աղբիւրը*, հասկանալի կլինի թէ ինչու յաճախ Բագուի կրեստները, թողնելով հանքային ջրերը, գալիս են այստեղ ամառանոց:

Երկրորդ սրբատեղին է Ս. Մինասի մատուռը, որ շինուած է մի ապառաժ քարի վրայ, և ուր բացի մի քանի փորագրուած խաչերից և տառերից ոչինչ չկայ: Այստեղ ևս մի գեղեցիկ մատուռ է շինել Տ. Թագուհի Մելիքեան:

Երրորդ սրբատեղին է Ս. Սիմոնի և ս. Յովհաննու ճգնաբանի վրայ շինած մատուռը: Ինչպէս սորա արաբերէն արձանագրութիւնն է ցոյց տալիս, այստեղ են թաղուած Սիմոն և Յովհաննէս ճգնաւորները: Արաբերէնին կից նոյն քարի վրայ եղել է, ինչպէս երևում է, և հայերէն, բայց այժմ մնացել է միայն ՇՊԸ թուականը, թէև մատուան միջկան երկու տապանաքարեր, բայց ոչ մի յիշատակութիւն չգտնելով նոցա վերայ՝ դժուարանում ենք ՇՊԸ թ.-ը ընդունելու, որ կլինէր փրկչական 1118 թ.:

Ս. Եղիայի մատուռից գէպի արևելք, դարձեալ մի ժայռի վրայ կայ չորրորդ սրբատեղին, որը չունի և ոչ մի յիշատակարան. ուստի յայտնի չէ՝ ո՞վ է այդտեղ թաղուածը և երբ է կանգնեցրած այդ մատուռը: Ներսի կողմից արևելեան սլաքի վրայ կան երկու խաչքարեր, որոնք ծեփած են:

Բացի սոցանից այստեղ գտնուած են Զ. Պ. և Զ. հայոց թուականի տապանաքարեր և դրամներ, որոնք հաստատում են Բուդոնի շատ հին և հայաշատ կենտրոն լինելը: Վերջերս երեք կոպէկանոցի մեծութեամբ մի ոսկէ դրամ էր գտնուած, որի մի կողը լցրած էր հայերէն արձանագրութեամբ, իսկ միւս կողմում փորագրուած էր մի խաչ, շրջապատուած դարձեալ հայերէն տառերով. բայց թուրքը, որի մօտ գրա-

* Այդ աղբիւրն ջուրը Բագու քաղաքի բժշկական խորհրդի քննութեան ենթարկուելուց և անջուր քաղաքի համար միակ առողջարարը գտնուելուց յետոյ՝ 1901 թ.-ին բազուեցի Պ. Հ. Ս. Մելիքեանցի նախագահութեամբ կազմած մի ընկերութեան միջոցաւ Բալախանի տարուեցաւ. իսկ յետոյ անկասկած կհասցնեն մինչև քաղաք:

նուում էր այդ դրամը, ցոյց չի տալիս՝ պատճառ արանելով իբր թէ կորցրել է:

Այսքան տեղեկութիւններ միայն կարողացանք կարճ ժամանակամիջոցում այդ բազմայիշատակ, երբեմն հայաշատ, կենտրոնից ձեռք բերել: Կան ուշադրութեան արժանի ուրիշ հնութիւններ ևս, և դուցէ աւելի ևս գանուին, եթէ աւելի ձեռնահաս մէկը նոցանով զբաղուի: Սրինակ, Նար—Գար թուրքաբնակ գիւղում բացուել են աւազի տակից երեք սենեակներ, ուր արգելուում է հայերի ազատ մուտքը. իսկ ինչպէս թրքերն են պատմում, այդ սենեակներից մէկում նստած է մի հերարձակ կին, զրկին բռնած մի երեխայ: Գուցէ մի կուռք է այդ, ինչպէս և Բազուայ Ա. Աստուածածնայ եկեղեցու տեղում եղել է ծովի շաստուածուհու կատունը, և այնտեղ գտնուած կուռքը մինչև այսօր էլ պահուում է եղբայր Միրզաբէկեանցների մօտ:

Dr. Տէր Յովհաննէսեանց.



Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Տաճկահայերի համար, որոնք ռուսահայերի նման մեծագումար կտակներ անելու սովորած չեն դեռ, մխիթարական է այն լուրը, որ վերջերս Սամսոնում վախճանած Յակոբ Կիւտիկեան անուն անձնաւորութիւնը, ինչպէս կարգում ենք Սուրհանդակում, 500 ահան ոսկի (4500 ռ.) է նուիրել քաղաքի եկեղեցուն ու վարժարանին: Հանգուցեալը բացի այն նուիրատութիւնից մի մի գումար էլ թողել է Սամսոնի Խալամների իգական և Նիքասար գիւղաքաղաքի Հայ վարժարաններին:

—Կեսարիայի Ս. Կարապետ վանքում ձեռնարկել են մի նոր վարժարանի շինութեան: Գարոցը պէտք է կառուցուի 4000 քա. կանգուն գետնի վերայ և ծախքը հաշուում են 1500 օսմ. ոսկի: Այդ գումարի կէսն արգէն պատրաստ է, շնորհիւ մի քանի հա-